## 127. ԽԸԵԼՔԸ ՄԸԵԾԵՆ ՆԱՆ ԿՈՒԺՈՒՐԸԵՆ ՑԻՐԱ̈ ՉԻ

*Մին հըգյիրու Թաքավըրը պըռավում ա։ Գյո̈նդո̈ւմ ա, վըեր ծէրա̈ն մըռնըելանը հետը տղան կըրըլական չի հըգյիրը կառավարե, օղում ա տղըեն հետե մին խըելունք հարթնը քթենա, հանցու տղըեն քյո̈մա̈գյ անըե։*

*Թաքավըրըրը շորըերը փոխում ա, քյինա̈մ սաղ հըգյիրը շռռ կյամ, հըսնում մին շեն, մին տան ղոնաղ ինգյո̈ւմ, տըեսնում ժուղովուրթը հըվաքված, մըեռալ ըն տանում թաղըեն։ Տնատըեռնը հըրցնում ա, թա էն հինչ ա՞, տնատարը թա՝ մարթ ա մըեռալ, տանում ըն թաղըեն։ Թաքավըրըրը հըրցնում ա.—Ցա̈նի լափ մըեռալ ա՞, թա խըրե՞գյ ա մըեռալ։ Տնատարը թա՝ լափ մըեռնելըն ան խըրեգյ մըե՞ռնելը վըերըն ա, մարթը նա̈փա̈սը կտրալ ա, մըեռալ, տըեռալ մին փադ։ Թաքավըրըրը խոսում չի։*

*Տնատարը վըեր քյինա̈մ ա էն մին օթաղը, ըխճըկանը նհըետ ասում ա.—Գյո̈նդո̈ւմ շըմ, հենց ա մըեր ղոնաղը խըելքը տըեղը չինի, հըրցնում ա, թա էն մարթը լափ ա մըեռա՞լ, թա խըրե՞գյ ա մըեռալ։ Ախճիգյն ասում ա.—Ապա, տա խըելունք մարթ ա, նա գյո̈նդո̈ւմ ա հինչ ա հըրցնում, ասում ա՝ վըեր մըեռալ ա, խոխաըրախա թողալ ա՞, տանը ծոխը եր տանող կա՞, թա՝ չէ։*

*Թաքավըրըրն էտ խոսկըերքը լոխ ըսկանում ա, ասում՝ ըհը՜ը,*

քթալ ըմ, մենակ էս ախճիգլը կըկարե ինձանձ հետը երգյիրըս կառավարե, տըղես հետե օղըեմ, տանըեմ։

Էքյսը վըեր ըոըեղաա հղե յա ինծում ծիրան պալատը, մարթիքյ ա ղարկում, ասում՝ քյեցեքյ էսհինչ շենումը խաղի մին բյասիր մարթ կա, նրա ախճիգը ուղըեցեքյ, պերեքյ։

Թաքավըերեն մարթիքյը մին երկու օրան հետը լավ պատրաստութենավ կյամ ըն էտ մարթին տոն, ասում.—Թաքավըերը ղարկալ ա, վըեր կյանք քու ախճիգլըտ ծիրան տըղեն հետե օղըենքյ, տանըենքյ։ Էտ մարթն էլ ասում ա.—Ա՛յ ջանըմ, մարթ ըլե քթա՞լ, քյինաք նրանավ ղարափաթ անըեքյ, պա էս հլիվուր հալիս ես ը՞մ մնացալ, թաքավըերը հո՞ւ, ե՞ս հուս էս մարթիքյն ասում ըն.—Չէ՛, ղարափաթ ըլըեք անում, էն օրեն ծըեր տանը ղոնաղը թաքավըերն ա ըլալ, ըխճըկանըտ տըեսալ ա, հավան կացալ, ասում ա՝ շատ խըելունք ախճիգյ ա, մեհենգյ եկալ ընք օղըենքյ, տանըենքյ։

Վերջը, էտ մարթին հըվըրտցնում ըն, ախճիգյը տանում թաքավըերեն պալատը, օխտը օր, օխտը քշեր հըրսանեքյ անում, թաքավըերեն տըղեն նհըետ փըսակում։